№ 192 Հոկտեմբերի 31 (Նոյեմբերի 12) 1880 Հոկտեմբերի 31 (Նոյեմբերի 12) № 192

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստորագրացանց տիտղոսները ուղղվի
Редакція «Мшакъ».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Ձայնագրութիւնն ընդունվում է ամեն ժամով։

Ձայնագրութիւնների համար վճարում են
հրատարակչի բաժին 2 կոպէկ։

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРДРУНИ
ОТДАЮТСЯ ВЪ НАЙМЫ
МАГАЗИНЫ
АМФОРИНОВЪ ГЕЗАЛДЖЕРЕАНЪ
фасадомъ выходятъ въ
ХАНЪ ОТЪ ТЕНЕ
1—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Նամակ Թէլուից։ Նամակ Չեմ-Նախիջևանից։ Նամակ Բաքուից։ Նամակ Վաղարշապատից։ Նամակ Ալեքսանդրից։ Նամակ Դէրբենդից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «Голосъ» լրագրի Աղոակցութիւնը։ պարակտատան։ Նամակ Թիֆլիսից։—Վերջին։ Հեռագիրներ։—Ցայտապարագիներ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԷԼՈՒՑԻ

13 հոկտեմբերի

Ռուսաստանից հարուստ Կախեթը, կարծես, գաղտագաղտած է միշտ անշարժ մնալու։ Ժողովուրդը գտնվում է թէ նիւթական և թէ մտաւորական աղքատութեան մէջ։ Այստեղ չը կայ ոչ օրիորդաց առուստոր և ոչ մէջտեղ։ Քաղաքը տարուց տարի գաղտագաղտվում է հարուստ բրնակիչներից և մեծամեն միայն աղքատները։ Վերջը ի՞նչ պէտք է լինի՝ չը գիտնաք Մաուսաստան կողմից էլ բոլորովին անշարժ է։ Թէլուեցիք բացի մեր դպրոցներից, ուրիշ բարձրագոյն դպրոց չը գիտեն։ Այստեղ գուք էլ կարող գանել մի տեղացի համալսարանական երիտասարդ, մի հասկացող զարգացած մարդ։ Թէլուեցին սովորելով վերջերին գրել կարդալը, նա արդէն գիտնական է համարվում, սովորելուց արշինով չափելը, նա հմուտ ու ճարպիկ վաճառական է։ Այստեղ ամենեին ուշադրութիւն չեն դարձնում քաղաքիս աւազակութիւնների վրա։ Այս տարի երեք մարդ են վիրաւորել, իսկ ամոյս եօթին չորրորդին կարտեցին։ Ինչ է շինում ոստիկանութիւնը։ Մարդս շուկայով չէ կարողանում անցնել, հագար տեղից յիշողներ է լսում, փողոցում միմեանց քիթի ու պտունգ են ջարթում։ Մեր քաղաքը նախնձելի չէ և բժշկի կողմից։ Նրա վրա էլ բաւական գրվեցաւ լրագիրներում, բայց ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց։ Մեր բժիշկը մամնա շատ է սիրում։ Նա ամիսի ունեցայ օրերում այս իրողութեանը ներկայ լինելը։ Մի մերձ ի մահ երիտասարդ, որը բժշկին ամեն մի այցելութեան համար 3 ր. էր վճարում, խնդրում է ինձ բժշկին հրաւիրել։ Նա խնդրեցի բժշկին շուտափոյթ օգնութիւն հասցնել։ Նա պատասխանում է՝ „ես այս րոպէիս գնում եմ գիւղը, երեկոյեան կը վերադառնամ։“ Երեկոյեան բժիշկը իմանալով հիւանդի երկիւղալի դրութիւնը, հրաժարվեցաւ բժշկելուց։ Ապտեկարն էլ միշտ ապտեկայից բացակայ է գտնվում։ Դեղատամանով գալիս են ապտեկա, միշտ պատասխան են ստանում, որ նա կամ կարի է, կամ մի ուրիշ տեղ։ պէտք է մարդված դէս ու դէն վազվզես, մինչև նրան գտնես։ Իսկ ի՞նչ են մտածում թէլուեցիք։ Մինչ մինչև այժմ չը խրատվեցան, ի՞նչու մի օրինաւոր բժշկի չեն հրաւիրում իրանց ծախսով։ Եթէ անցեալը մոռացել են, թող ներկան աչքի առաջ ունենան։ Մինչ չեն տեսնում, թէ այս տարի կոկլեւշ հիւանդութիւնը որքան անմեղ երեխանց զոհ է տարել։

Մենք ունենք թէլուում երեք հայկական ծխական դպրոցներ՝ երկուսը օրիորդաց, իսկ մինը տղայոց։ Երկուսի մասին բաւական գրվել է „Մշակի“։ լրագրում, մեծ է երրորդը։ Սա Մարիամեան օր. դպրոցն է։ Սրան կառավարում է տ. Մարիամանցը, առանց որ և իցէ ուսուցչի, մեծագոյն և պրոգրամմայի։ Այս տիկինը համարեա նման է թափառական հրէայի, որովհետև ամիսը մի անգամ տեղափոխում է իր դպրոցը։ Սրա պատճառը այն է, որ այս տիկինը շատ անհանգիստ բնաւորութեան տէր է։ Դեռ երկու տան-տիկիններին է փնտրել, այժմ գնաց երրորդի մօտ։

Նախանձելի չեն թէլուեցի հայոց եկեղեցիները։ սուրբ Աստուածածնայ Սուրբ-Հէչ եկեղեցին քանդվում է,—փող չը կայ, տեր չը կայ։ Նրա քահանաներից տ. Մ. Ժողովրդեան այնպէս է զգվացրել, որ էլ ոչ ոք եկեղեցի չի մտնում։ Փոխանակ իր սուրբ պաշտօնը կատարելու՝ դաւ-դաւ բարայի եռեւից է ընկած, ամեն օր նստած է սուգում, փնտռում է կլեէնաներին և ապօրինութեամբ է պարապում, իսկ ոտն և կիրակի օրերը դամբը ձեռքին Հրազարի ճանապարհն է որսում։ Միւս եկեղեցին Ղեվոնդ Պալատանոս սուրբ Դէորգն է, կամ Գէորգ Ջ. վարի։ Այս չորս քահանայ ունի։ մինը նրանցից շատ ծեր է, ցերեկով քնած է, իսկ գիշերով ժամ է ասում, այն էլ կէսը ձանձրացրելով է ասում, այնպէս որ, երբ ժամի դռանը հասնում է, ժամը արդէն աւարտած է լինում։ Հաւատացվաց ժամի երեքին գալիս են միւս քահանաները, զանգ են տալիս և ժամկոչից իմանում են, որ զիշերով դուրս է բերած ժամը։ Այս եկեղեցին ժողովրդեան համար չէ շինած, այլ քահանաների համար, որովհետև մինչև ժողովրդի գալը քահանաները ժամը աւարտում են։ Մինչև ժողովուրդը կը հասնի եկեղեցի, տէր-Եր. արդէն զնացած է լինում։ Ուրվհետև խօսակցութիւնը քահանաների վրա է, ուստի մի քանի խօսք էլ նուիրենք Վ. Ելիսեցիանց տէր-Ե-ին։ Այս մօտիկ ժամանակներում այդ գիւղումն էր, այդ տեղ մի մարդ գանդատվեցաւ նրա սեպով „մոտ 8-ը տարի է ես նշանված եմ, իմ նշանածից ունեմ երեք որդի, բայց այդ ուստա տէրերը չէ պակաւում, որովհետև ես 6 ր. եմ տալի, իսկ նա 10 է ուզում։ Այս մի խեղճ մարդ լինելով չեմ կարող 10 բուբլի տալ ու այսպէս մնացել եմ տարակուսած։“ Սա հարատահարութիւն չէ՞։ Դեռ համարձակվում են այդպիսի քահանաներին խաչ, փիլոն և այլ պարգևներ առաջարկել։ Մի՞թէ այդպիսիներին պէտք է քաջալերել։ Այդ Վ. Ելիսեցիանց գիւղում ամոյս 10-ին իշ. Գ. Բրզոնկինին դաշտը խրելով իր փորի մէջ, սպանեց իրան։ Պատմառը ասում են այն է եղել, որ Աղնաթի հաշ. գատարանում գործ է ունեցել և տանուել է տուել։

Կախեթեցի

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ

15 հոկտեմբերի

Ռուսաց և պարսից պատերազմից յետոյ մի քանի տուն հայ բնակիչներ գաղթելով Սալմաստի գաւառից, այժմ բնակվում են Նախիջևանի գաւառ։ Գաղտնի գիւղում, որոց թիւը հասնում է մինչև երկու հարիւր տուն։ Գիւղս զարի է ծառաբոյսերից, ժողովուրդը պարապում է մեծ մասամբ երկրագործութեամբ, և յօտարութիւն գնալով, հագիւ հաց կարողանում էն իրենց տարուան ապրուստը ձարել։ Ունեն մի հասարակ պատերով շինած, փայտաշէն եկեղեցի, որի կառուցից, անձրև գալու միջոցին ամեն կողմից կաթկթում է։ Ունեն երեք զիներուններ և երեք քահանայք։ սոցանից մէկը գառամեալ է, իսկ երկուսը երեք կամ չորս տարուան նորընծաներ են։ Սոցանից մէկը յարգելով Մահմեդի դրած նղովքին, բոլորովին գործ չէ ածում զիներ կամ օղի, իսկ միւսն է խորէն քահանայ Մալխասեանց։

Այս տարի մայիս ամսին եկաւ այս գիւղը Երևանի նահանգի թեմական տեսուչ պ. Գէօշեանցը, որը Ա. Հովսեփ Կաթողիկոսի հրամանով սկսեց ժողովրդին քարոզել մի ուսումնարանի շինութեան մասին, և ժողովրդի համաձայնութեամբ ընտրեց երեք հոգաբարձներ և ուսումնարանի վերատեսուչ նշանակվեց հայր Խորէն Մալխասեանցը։ Աւիսոս որ պ. Գէօշեանցը չէր հասկացել հայր Խորէնի պակասութիւնը, կամ օրինաց հաստատ հոգի, հատատ հայցողը և ջուրը բռնելու միջոցին ժողովրդի հետ կուռելը։ Հայր Խորէնին ի՞նչ էր փոխ ուսումնարանը կամ տեսչութիւնը, սոքա համար թող հաստատուն լինեն գնեանունները։ Կան երկու կամ երեք երեխայք նրա տան մէջ, որ սովորում են 5 կամ 6 տարիների ընթացքում հագիւ թէ փանկերով կարդալ, որովհետև, ամառը տէր հոր կալումն կամն են քշել, իսկ ձմեռը դասում տաւարների տակը մարդել և նոցա աղբը բասմայ դցել։ Հայր Խորէնի ի՞նչ գործն է դպրոցի տեսչութիւնը։

Այսու ամենայնիւ, հայր Խորէնը բաւական ճարպիկ և խորամանկ է, նա նմանում է Աստապակի Ռաֆթաեանց տէր-Մելիքսետին, որին սատանի չաքաղ են անուանում։ Նա ժողովրդի կամ մեծամեծների սրտերը գէպի իրան գրաւելով կամեցաւ Երնջակաւ գեղին մերթ դառնալ։ Թէև այդ խորհուրդն մնաց անկատար, բայց մերթաբերութեան փոխարէն զորձակալութեան պաշտօն ստացաւ, որի պատճառով Նախիջևանցի մահտեսի աղային մի քանի ձի ընծայ տարաւ, և արժանապատիւ անդամացը, հոգևոր կառավարութեան ամեն մեկին հինգ պուդ լաւ ցորեան հատ կարկատացու ցորեն տուաւ։

Երբ որ դարուն սկսում է հայր Խորէնի գործերն էլ սկսում են. ամեն առաւօտ վաղ, տէր հոր սովորութիւնն է այս, ախպէր Օհանէս Մաշկիին, Շէրօին (այսպէս է անուն տալիս իր եղբերին) լծել և գիւղի որ և է մի կողմի ուրիշներին պատկանող արտերը ինքնագլուխ վարել կամ ջրել։ Ոչ կը համարձակվի նրա երկայնակոթ բահի հարուածին արժանանալ. այն ինչ կը տեսնէ իր ղլուխը երկու կոտր էլաւ. ոչ կարող է հակառակել նրան։ Գիւղի զրագիրն էլ նա է. գործակալութիւնն էլ որ ստացաւ այն էլ ուելի։ Խաւարան է որ մի երկու անձինք իրար հետ կուռեցին, խաղալն կը գիմեն տէր հորը, նա խաղալն կը պատրաստէ երկուսի համար էլ քան արժանայն խնդիրներ, մէկին շինական գատարանը կուղարկէ, իսկ միւսին հաշտարար դատարանը, և որ կողմից որ աւելի պարգև ստացաւ, նորա համար մինչև անգամ փաստաբան էլ կը գտնայ, բայց փայն եկել է միւս կողմին։ Այսպէս էլ միշտ գիւղի մէջ միշտ խառնաւութիւններ է դրում, հոգարարեան վիճաբանութիւններ, նոցա հատատութեան թերթերը գրում, և որոց մի անդամն էլ ինքն է եղած, որովհետև քանի տարի է գիւղի զբաղարութիւնն ինքն էր անում։

Հայր Խորէնի արժանաւորութեան մասին վերոյիշեալ գործերում և իր աշխատութեան մասին Գէնոմեայ երեք ուսում նորարարների համար, երևի աւագ քահանայութեան և խոտայ փիլոնի իրաւունք կը ստանայ օրհնութեան թղթով։

***

ՆԱՄԱԿ ԲԱԳԻՐԻՑ

16 հոկտեմբերի

Ինքն ըստ ինքեան մի յայտնի ճշմարտութիւն է, որ գաւառական ժողովրդի զանկիվ, անկիրթ և փանգամայն խաւար մեծամասնութիւնը, զարի լինելով ինքնուրոյն յառաջդիմութեան ընդունակութենից, մեծ կարօտութիւն ունի մասնաւոր զարգացած անհատների աջակցութեան, իր կեանքը համանակից պահանջներին համեմատ յառաջդիմելու համար։ Այդ պատճառով ամեն մի գաւառական քաղաքի զարգացած և լուսաւորված անհատները, որոնք կազմում են ժողովրդի, այդպէս ասած, ինտելիգենտ դասը, հնարաւոր պարտաւոր են բարի, ազնիւ և անշահասէր նպատակով ազդել խաւար ամբոխի վրա, աշխատել աստ նրան ժամանակակից պահանջներին համեմատ ուղղութիւն, քանալ՝ ոչնչացնել հին նախապաշարմունքները, որոնց մէջ նա դաստիարակվում է ամենայն ուժով։ Այդ պատճառով ամեն մի գաւառական քաղաքի զարգացած և լուսաւորված անհատները, որոնք կազմում են ժողովրդի, այդպէս ասած, ինտելիգենտ դասը, հնարաւոր պարտաւոր են բարի, ազնիւ և անշահասէր նպատակով ազդել խաւար ամբոխի վրա, աշխատել աստ նրան ժամանակակից պահանջներին համեմատ ուղղութիւն, քանալ՝ ոչնչացնել հին նախապաշարմունքները, որոնց մէջ նա դաստիարակվում է ամենայն ուժով։ Այդ է ահա Քաղաքի զարգացած անհատների գլխաւոր բարոյական